ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՐԻՆԻՑ ՄԻՆՉԵՒ ԲԱՔՈՒ՝ ՀԱՅԸ ՄԻԱՅՆԱԿ ԷՐ ՏԱՃԿԱԿԱՆ ԱՐՀԱՒԻՐՔԻ ԴԷՄ

Առաջին աշխարհամարտի տարիներին եւ յատկապէս այդ շրջանի Հայաստանեան իրադարձութիւններին բազմաթիւ անդրադարձեր են եղել թէ՛ մերազնեայ, թէ՛ օտար հեղինակների կողմից։ Լոյս են ընծայուել գիտական-վերլուծական ուսումնասիրութիւններ, մենագրութիւններ, վաւերագրերի ժողովածուներ, ականատեսների վկայութիւններ... եւ այնուամենայնիւ շատ դրուագներ ու անգամ ամբողջական փուլեր տակաւին կարօտ են հետազօտողի ուշադրութեան։ Օրինակ՝ 1918 թուականի Կարնոյ իրադարձութիւնները գնահատելիս մի շարք պատմաբաններ, ասես իրար կրկնելով, քաղաքի անկման պատասխանատուութիւնը բարդել են հայ զօրահրամանատարների, առաւելապէս Անդրանիկի վրայ՝ դրան նուիրելով ստուար հատորներ։ Կտրականապէս տարբեր է ճեմարանական կրթութիւն ստացած (նաեւ Ներսիսեան դպրոց եւ Ժնեւի համալսարան) Դերենիկ Դեմիրճեանի հպանցիկ ձեւակերպումը Կովկասեան ճակատի վերաբերեալ. «Այդտեղ գործում էին անգլօ-տաճկական ագրեսիան եւ ինտերվենցիան, որ նպատակ ունէին գրաւելու Կովկասը, համեստ դէպքում Անդրկովկասը։ Դրա զոհը եղաւ հայ ժողովուրդը... որը միայնակ կանգնեց տաճկական զօրքերի դէմ Էրզրումից մինչեւ Բաքու»[1]։ Այսօր արդէն աշխարհի տարբեր ծագերում գաղտնազերծուել ու գաղտնազերծւում են Ի. հարիւրամեակի առաջին քառորդի պետական փաստաթղթերը, տեղեկութեան ազատ հոսքը գրեթէ անսահմանափակ հնարաւորութիւններ է ընձեռում։ Սակայն Դեմիրճեանը, անշուշտ, զրկուած է եղել այդ բոլոր միջոցներից, եւ, բնական է կարծել, որ զուտ վերլուծական եղանակով արուած, բայց եւ ծանրակշիռ հետեւութիւնների հետ գործ ունենք։

---

[1] Դ. Դեմիրճեան, *Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցի շուրջ. տե՛ս «Դերենիկ Դեմիրճեանի յարկի ներքոյ», կազմ.՝ Կ. Ռաֆայէլեան, Երեւան, 2016, էջ 185։*

Միանգամայն դիտելի է, որ դէպքերից ճիշտ մէկ հարիւրամեակ անց, այդ ամենը նորովի ու աւելի համապարփակ դիտարկել-քննելու կարիք զգացուեց, ինչը հնարաւոր բծախնդրութեամբ կատարեց պատմագիտութեան դոկտոր, պրոֆէսոր Վահան Մելիքեանը։ «Էրզրումի պաշտպանութիւնը եւ անկման պատճառները 1918 թ.» վերտառութեամբ մենագրութիւնը լոյս է ընծայել «Զանգակ» հրատարակչութիւնը (Երեւան, 2019, 248+8 էջ)։ Գիրքը հրատարակութեան է երաշխաւորել ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի գիտական խորհուրդը։ Հեղինակն աշխատութիւնը նուիրել է Կարնոյ պաշտպանութեան 100-ամեակին ու Մեծ եղեռնի զոհերի եւ հայոց ազատամարտի նուիրեալների յիշատակին։ Գիրքն օժտուած է ռուսերէն ամփոփումով եւ օգտագործուած աղբիւրների ու գրականութեան հարուստ ցանկով։

Հայոց ազատամարտի եւ գոյամարտի կարեւորագոյն դրուագներից է Կարնոյ պաշտպանութիւնը։ Հեղինակը Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան հատուածներում դէպքերի ընթացի ուսումնասիրութիւնն սկսում է ռուսական երկու յեղափոխութիւնների (1917-ի փետրուարեան եւ նոյեմբերեան) միջեւ ընկած ժամանակաշրջանի դիտարկումով։ Գրքի առաջին՝ «Արեւմտահայ հասարակական-քաղաքական կեանքը բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ» գլխում դիտարկուած են Արեւմտեան Հայաստանի վարչական կարգին, արեւմտահայութեան վիճակին վերաբերող հանգամանքները։ Ներկայացուած են արեւմտահայոց երկրորդ համագումարի նախապատրաստական աշխատանքները, ինչպէս եւ հանգամանալի քննուած է բուն խորհրդակցութիւնը։ Առանձնակի ուշադրութեան են արժանացել արեւմտահայ հասարակական-քաղաքական, կուսակցական կեանքն ու զինական ուժի կազմակերպման գործընթացը։ Էրզրումի պաշտպանութեանը նախորդող ռազմաքաղաքական զարգացումները (1917 թ. դեկտեմբեր — 1918 թ. յունուար) ուսումնասիրուած են 2-րդ գլխում, տրուած է բոլշեւիկեան յեղաշրջման արդիւնքում Կովկասի ճակատում ստեղծուած քաղաքական եւ ռազմական իրադրութեան համապարփակ պատկերը, ներկայացուած են դէպի Երզնկա եւ Էրզրում հայկական զինուժի ուղղորդման փորձերն ու ջանքերը։ 3-րդ գլուխն ամբողջովին նուիրուած է Էրզրումի գոյամարտին եւ հայոց Կարին քաղաքի անկման պատճառներին ու հետեւանքներին։

Եղեռնազարկ եղած ժողովուրդն ասես յառնում էր արհաւիրքից. «Հայ գաղթականին մէջ հայրենի աւերակներուն սէրն ու քայքայուած

տնտեսութիւնը վերաշինելու ձգտումն այնքան ուժեղ են, որ չնայեած ամեն տեսակ խոչընդոտներուն, նոյնիսկ վարչական արգելքներու, ան կը տենչայ իր հայրենիքը վերադառնալ՝ գիտնալով հանդերձ, թէ այնտեղ ինչպիսի դժուարութիւններու, զրկանքներու պիտի ենթարկուի» (էջ 15)։

Վերադարձի կապակցութեամբ նշենք, որ բազում խնդիրների շարքում թերեւս դեր էր խաղում ցաւալի, աններելի մի նրբերանգ եւս, որը յետոյ կկրկնուի Խորհրդային Հայաստանում հայրենադարձութեան տարիներին, երբ կենսունակ կդառնայ «ախպար» եզրոյթը։ Օրինակ՝ Արշակ Չոպանեանը երազում էր ժողովրդի արեւելահայ-արեւմտահայ բեկորներն ի մի տեսնել՝ բռունցքուած, նպատակամէտ։ Մինչդեռ առճակատում էր ուրուագծւում, որի արձագանքը նկատելի է մտաւորականների նամակագրութիւններում։ 1917-ի նոյեմբերի 1-ին Վահան Թոթովենցը գրում է Չոպանեանին. «Բայց այդ բանը անկարելի է, քանի որ Կովկասեան հատուածը կուզէ Թրքահայ ժողովուրդը պահել վասսալ-խնմակալի վիճակում եւ տիքթատորի դեր ստանձնել անոր վրայ։ Դուք եկեր էք Կովկաս եւ հոստեղ կճանչնաք ռուսահայ մտաւորականները, բայց երկար չէք մնացած տեսնելու անոնց զզուելի բացասական կողմերը։ Անոնք «divine right» (երկնային իրաւունք) կը դաւանին մեր վրայ...» (էջ 29—30) Ցաւեցնող, անմեկնելի իրողութիւն...

Ինչն էր բնորոշ պատմութեան այս փուլին։ Հաւանաբար ամենամտապահուողը տենդագին կերպով ստեղծուող, լուծարուող տարատեսակ յանձնախմբերը, խորհուրդներն էին, որոնք չէին էլ հասցնում գործուն աշխատանք իրականացնել։ Դրանք յաճախ մեռելածին էին, երբեմն՝ հակոտնեայ։ Պատահում էր, որ ղեկավար մարմիններում ընդգրկւում էին ապաշնորհ, յաւակնոտ, ոչ գործունեայ, կամային յատկանիշներից զուրկ անձինք։ Իսկ վիճակն աւելի քան օրհասական էր... երկիրը մարդասիրական աղէտի, ժողովուրդը՝ ոչնչացման (սով, համաճարակ) վտանգի առջեւ էր կանգնած։

1917-ի մայիսին ԱՄՆ նախագահ Վուդրօ Վիլսօնը պնդում էր. ոչ մի ժողովրդի հնարաւոր չէ պարտադրել, որ ենթարկուի անընդունելի տիրակալութեանը։ Նա նկատի էր առնում նաեւ Արեւմտեան Հայաստանը։ Նոյն ամսին Թիֆլիսում Անդրանիկի հետ հանդիպեց ԱՄՆ հիւպատոս Ֆ. Ուիլլօուբի Սմիթը, որն առաջարկեց դրամական առումով աջակցել արեւմտահայ զօրամասի կազմաւորմանը՝ գործողութիւնները վերահսկելու պայմանով։ Ի սէր այս նպատակի՝ նա մտադիր էր օգտագործել

ռուսական 100-միլիոնանոց վարկի մի մասը։ Ծրագիրը ներկայացուեց Մոսկուա, ուղարկուեց Վաշինգտոն եւ եւրոպական դաշնակից երկրների իշխանութիւններին։

Փարիզում Հայկական պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուբարն իր հերթին մի յուշագիր պատրաստեց ԱՄՆ պետքարտուղար Ռոբերտ Լանսինգի համար։ Ըստ վաւերագրի՝ ապագայ ինքնավար Հայաստանի կազմում պէտք է լինէին հայկական վեց նահանգները, Կիլիկիան, Տրապիզոնը, եւ այն գտնուելու էր դաշնակիցների հովանու ներքոյ։ Սակայն ընդամենն ամիսներ անց պարզ դարձաւ, որ Արեւմտեան Եւրոպայի տէրութիւններն արեւմտահայութեան ապագան տեսնում էին օսմանեան տիրապետութեան ներքոյ՝ առանց արտաքին վերահսկողութեան...

Հիւսիսում հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ մեր հայրենիքի արեւմտեան մասում հրատապ խնդիր էր ետ քաշուող ռուսական զօրքի փոխարէն հայկական ջոկատների ստեղծումը։ Դեկտեմբերի 29-ին «Հայաստան» պարբերականը հրապարակում է Հայաստանի ապահովութեան խորհրդի եւ Անդրանիկի համատեղ կոչը. «Հայրենիքը վտանգի մէջ է, վտանգի մէջ է եւ մեր գոյութիւնը, արձագանք տուէք մեր զօրակոչին» (էջ 39)։ Իսկ արդէն 1918-ի փետրուարին Վասպուրականից ահազանգում էին. «Երկրամասը դատարկւում է ռուսական զօրքերից եւ ռազմական նպատակների միտուած տարաբնոյթ ծառայութիւններից՝ հրետանաւորներ, փօստի, հեռագրի, հիւանդանոցի, ախտահանիչ խմբի պաշտօնեաներ։ Քայքայման գործընթացի պատճառ էր ընդգծւում նաեւ հակահետախուզութեան՝ ծագումով գերմանացի պետի դերակատարութիւնը» (էջ 61)։

Ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու խոչընդոտներն ու հիմնախնդիրները բազում էին։ Մասնաւորապէս՝ Հայաստանի Արեւելեան եւ Արեւմտեան հատուածներն ասես իրարից կտրուած էին. բնակավայրերը՝ ցրուած, մեկուսացած, հաղորդակցման ուղիները՝ սակաւ, գրեթէ առանց այլընտրանքի։ Այսպէս. «Վանի նահանգը, Բայազէտի դաշտը, Դիադինի, Ալաշկերտի հովիտները, Մանազկերտը, Բուլանըխը, Խլաթը, առաւել եւս Այնթափը (Կիլիկիա) Արեւելեան Հայաստանի հետ կապուելու միայն երկու միջանցք ունէին։ Մէկը Իգդիրի ճանապարհն էր, որը բոլոր կողմերից շրջապատուած էր քրդական աւազակախմբերով, Իգդիրից Կզըլ-Դիզէ անցումն էլ պաշտպանւում էր ընդամենը մէկ զինուորական պահակագնդով (Կարէի էտապ)։ Երկրորդը Շահթախթ-Ղարաքիլիսա երկաթուղին էր,

որի մի ճիւղը Բայազէտի մօտ եւս ամբողջովին վերահսկում էին քրդերն ու պարսիկները։ Ռազմաճակատի թիկունքը կայուն պաշտպանելու նպատակով առաջարկւում էր ճանապարհների երկայնքով վնասազերծել աւազակային միաւորումները եւ շարունակել Առնիսի կամրջի շինարարութիւնը» (էջ 60)։

Էրզրումը միշտ համարուել է Փոքր Ասիայի բանալին՝ ռազմավարական բացառիկ նշանակութեամբ։ Իսկ 1917-ին այն իսկապէս սահմանագծի էր վերածուել, որի դերը դժուար է գերագնահատել։ Ծագումով ազնուական, ցարական բանակի գեներալ-մայոր Նիկոլայ Մօրելը հրաշալի էր հասկանում այս տարածաշրջանի կարեւորութիւնը յատկապէս իր հայրենիքի համար։ Ու թէեւ ռուսները լքում էին թուրքական ճակատը, նա մնաց. ոչ միայն հայերին աջակցելու նպատակով, այլ նաեւ ռուսական պետական շահերից ելնելով, իր հայրենիքի համար օգտակարն ու լաւը ձայլուն գիտակցելով (էջ 111)։

Զանգուածային դասալքութիւնը մի խնդիր էր, դժուար համալրման հոգսը՝ մէկ այլ։ Շատ բնորոշ օրինակ է, որ կամաւորների հերթական խմբին առաջնագիծ ճանապարհելիս Արամ Մանուկեանը ցաւով նկատել է, թէ ճանապարհողներն աւելի շատ են, քան մեկնողները...

Սակայն կային նաեւ անվեհեր, մարտի պատրաստ երիտասարդներ, եւ այդ փաղանգում առաջին շարքերում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, Գէորգեան ճեմարանի սանները, Սփիւռքի գաղթավայրերից ժամանածները։

1918 թուականի հէնց սկզբից յստակ էր մի բան՝ մենք մենակ էինք։ Առանց դաշնակիցների։ Վրաց ազգայնականների «Возрождение» *թերթը հայերին յորդորում էր յանձնուել, չկռուել թուրքերի դէմ եւ ակնարկում էր, որ իրենք չեն օգնելու հայերին, աւելին՝ մեզ զոհաբերելու են թուրքական հորդաներին։ «Վերջնականապէս պարզուեց, որ Անդրկովկասեան կոմիսարիատն ու աւելի ուշ ձեւաւորուած Սէյմը՝ իր վրաց-թաթարական քաղաքական մեծամասնութեամբ, ոչ թէ կրաւորական, այլ հետեւողական ու բացայայտ ոչ հայամէտ դիրքորոշում էր որդեգրել... Մասնաւորապէս յօդս ցնդեց Կովկասեան ռազմաճակատը միացեալ՝ անդրկովկասեան ուժերով պաշտպանելու՝ ի սկզբանէ սնանկ ու անհեռանկար դիրքորոշումը»,— գրում է պրոֆէսոր Մելիքեանը (էջ 128)։*

Մենագրութեան հեղինակը համակողմանիօրէն դիտարկել-վերլուծել է Կարնոյ իրադարձութիւնների վճռական փուլում գլխաւոր դեր

կատարած Անդրանիկ զօրավարի գործունէութիւնը՝ բաժանելով երկու փուլի. նախապատրաստական՝ Թիֆլիսից Կարին, եւ արդէն տեղում կազմակերպած դիմադրութիւն։ Վերլուծաբար դիտարկուել են Հայաստանի ազգային արխիւի նիւթերը, ժամանակակիցների յուշերը, մամուլի հրապարակումները։ Աւելորդ է ասել, որ այդ սկզբնաղբիւրները յաճախ միակողմանի, անձնաւորուած, միտումնաւոր բնոյթ ունեն։ Անաչառ չեն։ Եւ, հաւանաբար, այլ կերպ լինել չէր կարող։

Թիֆլիսի Հայոց ազգային եւ Ապահովութեան խորհուրդների միջեւ իշխում էր ներդաշնակ համագործակցութեան մթնոլորտ, սակայն դիվիզիայի հրամանատար նշանակելու կապակցութեամբ առաջացաւ անհամաձայնութիւն։ Ապահովութեան խորհուրդն առաջադրում էր Անդրանիկի թեկնածութիւնը, իսկ Ազգային խորհուրդը, չառաջադրելով իր թեկնածուին, կարծում էր, որ «Մասնագիտական պատրաստուածութիւնից զուրկ Անդրանիկը չի կարող կառավարել դիվիզիայի պէս խոշոր զօրամաս» (էջ 55)։ Իսկ Արեւմտահայերի ազգային խորհրդի Բիւրոյի անդամ Վահան Փափազեանը հեգնում էր Անդրանիկի գեներալ-մայորի աստիճան ստանալու փաստը եւ, ըստ էութեան, անտեսում էր. «...այն կարեւորագոյն հանգամանքը, որ կործանուող ռազմաճակատը փրկելու համար ռուսական հրամանատարութիւնը գնում էր իր համար անընդունելի ու ծայրայեղ քայլի՝ գեներալի աստիճան էր շնորհում հայ ֆիդայական շարժման գործչին... այդ քայլով նաեւ փորձ էր արւում մի վերջին ճիգ գործադրելու հայ-ռուսական միասնական ուժերով ռազմաճակատը, եւ այդպէս, ի հարկէ, Արեւմտեան Հայաստանը փրկելու ճանապարհին» (էջ 154)։

Ընդդիմախօսները, այդ թւում նաեւ Վահան Փափազեանը, չէին ժխտում, որ զօրակոչը հնարաւոր եղաւ իրականացնել միմիայն Անդրանիկի ժողովրդականութեան ու հեղինակութեան շնորհիւ, այլ հարց է, որ այն չկարողացաւ արդարացնել սպասելիքները...

Մինչեւ առաջնագիծ մեկնելը Անդրանիկը Թիֆլիսում դաշնակից երկրների ներկայացուցչութիւններ յանձնեց անգլերէն եւ ֆրանսերէն թարգմանուած յուշագիր, որով շեշտում էր, թէ հայ ժողովուրդը բարոյական եւ նիւթական աջակցութեան կարիք ունի։ Ազգային գործիչը ցաւով արձանագրում էր, որ անդրկովկասեան կառավարութիւնը դրամական օգնութիւն է յատկացնում թուրքերին ու թաթարներին...

Արդէն առիթ ունեցանք խօսելու դժուարութեամբ իրականացուող զինակոչի մասին։ Մի տխուր, խօսուն դրուագ. դէպի էրզրում զօրավարի

ճանապարհին՝ Կարսում, հանրահաւաքի ժամանակ զինուորագրուել է 2000 հոգի, սակայն մինչ Անդրանիկը նրանց կխմբաւորէր ու համապատասխան կարգադրութիւններ կանէր, մնաց ընդամենը 25 մարդ... (էջ 163)։ Հեղինակը նկատում է, թէ Անդրանիկի ողբերգութիւնն այն էր, որ նա իր անունն ու հեղինակութիւնն էր ի սպաս դնում՝ յոյս ունենալով, թէ ունեցած փոքրաթիւ ուժերով կկարողանայ իրականացնել բախտորոշ ու վճռական դիմադրութիւն (էջ 173)։

Առանձին ուշադրութեան առարկայ է դաւաճանութիւնների հարցը։ Դեռ 1924 թ. Բոստոնում լոյս է տեսել «Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը. 1914—1917. Օրագրուած զօրավարին թիկնապահ զինուորէն» յուշագրութիւնը, որտեղ Կարնոյ իրադարձութիւնների անմիջական մասնակիցներն առաջին անգամ յստակօրէն վկայում են գեներալ Ի. Օդիշելիձէի դաւաճանութեան մասին։ Նա Կարինում եղած ժամանակ Վեհիբ փաշային կանոնաւորապէս տեղեկացնում էր տիրող իրավիճակի մասին (էջ 163)։ Անդրկովկասի թաթարական բարեգործական հաստատութեան լիազօր Սէիդովը հիմնականում գումար էր ուղարկում Էրզրումի շրջանի թուրքերին՝ խռովութիւն կազմակերպելու նպատակով (էջ 169)։ Կարնոյ բերդի հրետանու պետ, փոխգնդապետ, սեւհարիւրակային սպայ Տուերդօխլեբովը «ոչինչ չարեց հրետանին մարտական վիճակում պահելու համար, անձնատուր եղաւ թուրքերին, դարձաւ նրանց ծախու գրչակը եւ զրպարտութիւններ յօրինեց հայկական զօրամասերի եւ յատկապէս Անդրանիկի հասցէին» (էջ 170)։ Տարիներ անց՝ 1920 թուականին, Լեռ Կամսարը հրետանու յանցագործ «պարապուրդի» մասին կգրի. «Տաճիկները մեր թնդանօթներու տեղատարափ լռութեան տակ քաղաք մտան...», իսկ յետոյ կեզրափակի. «Եւ ժողովի նստան կովկասեան եղբայրները Թիֆլիսի մէջ, թէ ինչպէս ընեն, որ առանց կռուելու յաղթեն տաճիկին» (էջ 216)։

Կարնոյ անկման մասին բազում գնահատականներից բերենք մէկը միայն՝ Աւետիս Ահարոնեանի եզրայանգումը, թէ Կարնոյ անկման հարցում Անդրանիկը մեղք չունի. «Նա փորձեց պահ մը իր ներքին կրակով վառել փոքրաթիւ, հոգեպէս թուլացած, անկազմակերպ հայ բանակը Էրզրումի տակ, փորձեց հրաշք կատարել. մէկ խոյանքով ոտքի հանել նոյնիսկ մեռելները եւ փշրել թշնամու կատաղութիւնը... բայց չկարողացաւ փրկել դրութիւնը» (էջ 205)։

Անցեալի դէպքերի վերաբերեալ պատմաբանների եւ մշակոյթի գործիչների տուած գնահատականներից, եզրակացութիւններից յատկապէս

կարեւոր են դասերը, որոնք սերտելով պէտք է խուսափենք անցանկալի կամ ցաւալի դրուագներից եւ հակառակը՝ անենք այնպէս, որ ապագայում շատ լինեն բերկրալի պահերն ու յաղթանակները։ Պրոֆէսոր Մելիքեանը մանրամասն դիտարկել է Կարնոյ գոյամարտի, քաղաքի անկման պատճառները, դրա արձագանքները, հետեւանքները ու արել կարեւոր եզրայանգումներ (տե՛ս էջ 217–227)։ Սակայն Կարին քաղաքի առման պատմութեան ամենակարեւոր դասը, թերեւս, հայութիւնն ստիպուած էր սերտել շատ արագ։ Հետազօտողի դիտարկմամբ՝ ողբերգական իրադարձութիւններից հաշուեալ օրեր անց՝ 1918-ի մարտի 25-ին, «Վան-Տոսպը» գրում էր, թէ հայութիւնը, որ առաջին աշխարհամարտի ընթացքում 180 հազար զինուոր էր տուել ռուսաց բանակին, չկարողացաւ 5000 հոգի հաւաքել հայրենիքի պաշտպանութեան համար... (էջ 203)։ Իսկ ազգի նուիրեալ զաւակի՝ Անդրանիկի համար ամենացաւալին, անշուշտ, հայերի անմիաբանութեան, ոմանց դաւաճանութեան փաստերն էին, կողոպուտը, ընչաքաղցութիւնը, դասալքութիւնը... Եւ հաւանաբար միայն վերին Նախախնամութեամբ կարելի է մեկնաբանել այն հրաշքը, որ «Վան-Տոսպի» գրառումից բառացիօրէն երկու ամիս անց հայերն ապացուցեցին, որ անմիաբանութիւնն ու դաւաճանութիւնը, կողոպուտն ու դասալքութիւնը մերժուած են ի սպառ, եթէ խօսքը հայրենիքի պաշտպանութեանն է վերաբերում եւ ազգի գոյութեանը. վկայ Սարդարապատը, Ապարանն ու Մարտունականը, որ արեամբ ներկուելով՝ մնացին անառիկ։

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ